Հավելված
«Կուտակային կենսաթոշակների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

ՄԱՍՆԱԿՑԻ ԿԱՏԱՐԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՄԲՈՂՋ ԳՈՒՄԱՐԻ՝ ԳՆԱՃՈՎ ՃՇԳՐՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Մասնակցի կողմից սոցիալական վճարներ կատարելու ամբողջ ժամանակահատվածի կատարված սոցիալական վճարների՝ գնաճով ճշգրտումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ԿՎ}_{\text{գնաճով ճշգրտված ընդհանուր}} = \sum_{n=1}^{N}\left[\text{ԿՎ}_{n} * \prod_{m=n}^{N-1}(1+i_n)\right],$$

որտեղ՝

1) $\text{ԿՎ}_{\text{գնաճով ճշգրտված ընդհանուր}}$-ը մասնակցի կողմից սոցիալական վճարներ կատարելու ամբողջ ժամանակահատվածի համար նրա կողմից կատարված սոցիալական վճարների՝ գնաճով ճշգրտված մեծությունն է.

2) N-ը մասնակցի կողմից սոցիալական վճարներ կատարելու տարիների թիվն է.

3) ԿՎ_n-ն n-րդ տարվա ընթացքում մասնակցի կողմից կատարված սոցիալական վճարների գումարն է՝ տարեվերջի դրությամբ.

4) i_n-ն n-րդ տարվան համապատասխանող տարվա տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշն է՝ արտահայտված միավորի մասերով: Ընդ որում, n-ը փոփոխվում է տարիների հետընթաց հաշվարկով:

2. Սույն հավելվածի 1-ին կետով սահմանված բանաձևում մասնակցի կողմից օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կենսաթոշակ ստանալու մասին դիմում ներկայացվելու տարվա համար կատարված սոցիալական վճարը գնաճով չի ճշգրտվում: Այն դեպքում, երբ մասնակցի կողմից կատարված սոցիալական վճարների գնաճով ճշգրտման ժամանակ դեռևս առկա չէ տվյալ տարվա տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշը, ապա հիմք է ընդունվում նախորդ տարվա տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշը:

3. Սույն հավելվածում օգտագործված տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշ է համարվում Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված գնաճի միջին ցուցանիշը տվյալ տարվա համար:»:

Հոդված 2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կատարված կուտակային վճարները վերադարձնելը

1. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցված կուտակային վճարների հաշվին ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայերը, անձանց (մասնակիցների) եկամուտներից հաշվարկված կուտակային վճարների՝ Կենտրոնական բանկի կողմից 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ սահմանված դրամական միջոցների ներգրավման տարեկան տոկոսադրույքով ճշգրտված չափով, անձի դիմումի հիման վրա մարվում են և համապատասխան միջոցները վճարվում են մասնակիցներին՝ սկսած 2015 թվականի հունվարի 1-ից: Սույն մասը տարածվում է նաև այն փայերի վրա, որոնք ձեռք են բերվել սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը, սակայն մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով անձանց եկամուտներից հաշվարկված և մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցված կուտակային վճարների հաշվին: Այդ միջոցները վճարվում են բացառապես անկանխիկ եղանակով: Սույն մասով սահմանված դիմումը ներկայացվում է՝ սկսած 2014 թվականի սեպտեմբերի 1-ից: Կենտրոնական բանկի կողմից 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ սահմանված դրամական միջոցների ներգրավման տոկոսադրույքը մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով անձանց (մասնակիցների) եկամուտներից հաշվարկված և մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցված կուտակային վճարների նկատմամբ կիրառվում է այդ վճարները մասնակիցների ռեեստրը վարողին հաշվին փաստացի մուտքագրելու օրվանից մինչև այդ փայերը մարելու օրը: Սույն մասով սահմանված դեպքում համապատասխան միջոցները անձի բանկային հաշվին է փոխանցվում մարելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

2. Սույն հոդվածով սահմանված դիմումը ներկայացվում է մասնակիցների ռեեստրը վարողին՝ հաշվի օպերատորի կամ մասնակիցների ռեեստրը վարողի կայքէջի միջոցով: Սույն հոդվածով սահմանված դիմումի բովանդակությունը, դիմումը ներկայացնելու կարգը, համապատասխան միջոցները անձին վճարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկը: Ընդ որում, սույն հոդվածում նշված դիմումի հիման վրա սույն հոդվածով սահմանված կարգով կենսաթոշակային ֆոնդի փայերը մարելուց և անձին վճարելուց հետո.

1) եթե սույն հոդվածում նշված դիմում ներկայացրած անձը Օրենքով սահմանված սոցիալական վճար կատարող անձ է և չի ներկայացրել Օրենքի 81-րդ հոդվածով սահմանված՝ սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու դիմում, ապա կենսաթոշակային հաշվին առկա կենսաթոշակային ֆոնդի փայերը մնում են դիմումը ներկայացրած անձի կենսաթոշակային հաշվում, որոնց վրա տարածվում է Օրենքի 13-րդ հոդվածի դրույթները,

2) եթե սույն հոդվածում նշված դիմում ներկայացրած անձը ներկայացրել է Օրենքի 81-րդ հոդվածով սահմանված՝ սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու դիմում, ապա կենսաթոշակային հաշվին առկա կենսաթոշակային ֆոնդի փայերը մարվում են և համապատասխան գումարները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Օրենքի 81-րդ հոդվածով սահմանված՝ սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու դիմում ներկայացրած անձանց տվյալները մասնակիցների ռեեստրը վարողին է տրամադրում հարկային մարմինը:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օր և տարածվում է 2014 թվականի հուլիսի 1-ից: